GHAZARYAN HOVHANNES 1404750070 Digitally signed by GHAZARYAN

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/43467/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԸ
ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 օգոստոսի 2022 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ դատավոր Հովհաննես Ղազարյանի, ծանոթանալով «ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ պատասխանողի կողմում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին և կից փաստաթղթերին, քննարկելով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

22.08.2022թ.-ին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում (այսուհետ՝ նաև Դատարան) մուտքագրվել է «ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ նաև Հայցվոր) անունից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ընկերության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ պատասխանողի կողմում՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջով:

Դատավորի աշխատակազմին գործը հանձնվել է 24.08.2022թ.-ին:

Հայցվորի ներկայացուցիչը Դատարանին խնդրել է անվավեր ճանաչել «ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ընկերության տնօրեն Է. Թարփոշյանի 21.07.2022 թվականի թիվ 724-ել գրությամբ կայացված թիվ 02 որոշումը:

Դատարանը փաստում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին

համապատասխան, նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 3.1-րդ մասով և 27.2 գլխով սահմանված կանոնների պահպանմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Հաշվի առնելով այն, որ հայցադիմումը վարույթ ընդունելու պահի դրությամբ օրենքով սահմանված բացառություններ առկա չեն, Դատարանը գտնում է, որ գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: (…):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով: Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով, նույն օրենսգրքի 27.2 գլխի կանոններով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1/. «ՊՐԵՄԻՈՒՄ ԳԱԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ պատասխանողի կողմում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել Դատարանի վարույթ:

2/. Գործը քննել գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու:

3/. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2022 թվականի սեպտեմբերի 30-ին «DataLex» դատական տեղեկատվական համակարգի միջոցով (պաշտոնական կայքը՝ datalex.am):

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հովհաննես Ղազարյան